կոբի՝ նախագահ և արտաքին գործոց կոմիսար, Ն. Ռամիշվիլի՝ ներքին, Դ. Դոնսկոյ՝ զինուորական, Ա. Կարճիկեան՝ ելեմտական, Հ. Օհանջանեան՝ խնամատարութեան, Ներուչեւ՝ երկրագործութեան, Մելիք-Ասլանով՝ հաղորդակցութեան, Խան-Խոյսկի՝ արդարադատութեան, Լ. Բերութով՝ պետական վերահսկիչ: Զինուորական կոմիսարի օգնականներ նշանակուեցին Գորեչիան և Պ. Լևոնեանը: Երկրագործութեան կոմիսարի օգնականներ՝ Աւ. Շահխաթունեանը և Պ. Գելէյշվիլին:

Բայց Անդրկովկասեան Կոմիսարիատն ևս չդարմանեց դրութիւնը: Ընդհակառակը, նա ինքը հէնց դարձաւ կուսակցական պայքարի առարկայ և բոլշեւիկների ձեռքին՝ պայքարի ուժեղ զէնք:

Ժողով. Կոմիսարների Խորհուրդը Ստ. Շահումեանին նշանակել էր Անդրկովկասի կոմիսար, և սա աշխատում էր յեղաշրջում առաջ բերել Թիֆլիսում: Բոլշեւիկները ձգտում էին օգտագործել զօրքը, որի մէջ նրանց ազդեցութիւնը օրէցօր աւելանում էր և որոնց գրգռում էին Անդրկ. Կոմիսարիատի դէմ, որը, իբր թէ, Անդրկովկասը անջատել էր Ռուսաստանից: Փոխանակ բանակի մէջ վայելած համակրանքից օգտուելով՝ թիւրքերի դէմ պատուար կանգնեցնելու՝ Շահումեանը և իր ընկերները ճգնում էին զինուորութիւնը մասնակից դարձնել Անդրկ. Կոմիսարիատի դէմ մղած իրենց պայքարին և աստիճանաբար ճակատից յետ էին քաշում զօրամասերը: Այս հողի վրա, հոկտ. 20-ին, լքելով դիրքերը, դէպի Թիկունք խուժեց հուչակաւոր 39-րդ դիվիզիան:

Ասենք, բանակը առանց այդ էլ չէր հետաքրքրւում ռազմաճակատով: Նրա ուշն ու միտքը Ռուսաստանն էր, ուր «հող էին բաժանում»: Ուստի առանց սպասելու վերին հրամանատարութեան սահմանած կարգին, մասմաս, հազարներով ու տասնեակ հազարներով լքում էին դիրքերը, թողնում բազմամիլիոն հարստութիւններ, ռազմամթերքի ու պարէնի անհաշիւ պաշար, մթերքներով լիքը պահեստներ և հրացանը գրկած՝ նետւում վագոնները, շտապում «դէպի տուն»՝ ճանապարհին, մորեխի պէս, աւերելով ու խժռելով ամէն բան:

Ահա մի-երկու փաստաթղթեր, որոնք ցոյց են տալիս, հոկտեմբերեան յեղաշրջման հետեւանքով, կովկասեան ռազմաճակատում ստեղծուած դրութիւնը: Կովկասեան բանակի հրամանատարը հեռագրում է ճակատի ընդհանուր հրամանատարին, դեկտ. 25-ին. «Հակառակ առաջին կորպուսի նահանջի համար ճշտորոշուած ժամանակամիջոցին, վերջինս ինքնագլուխ թողնում է դիրքերը, և այս նահանջը սպառնում է ճակատը խսպառ մերկացնել: Այս հանգամանքներում հայկական զօրամասերի ճակատ ուղարկելու յապաղումը և, իբրև հնարաւոր հետեւանք, Երզնկայի գրաւումը ոչ միայն թիւրքերի, այլ և քիւրդերի կողմից ինձ կը հարկադրէ, հաւանաբար, պարպել ամբողջ շրջանը, որով մենք անխուսափելիօրէն կը կորցնենք Թիւրքահայաստանը»:

1918թ. յունուար 8-ին կովկասեան բանակի սպայակոյտը տեղեկագրում է. «6-րդ կորպուսը լքեց իր դիրքերը և ամբողջապէս քաշուեց դէպի Սարըղամիշ: Այս պահուն, վերջին գունդն է հեռանում և յուն. 13-ին ոչ մի զինուոր չի լինի Շէյթան-Դաղից դէպի հարաւ, և այս կողմից ճակատը